Հայերէն երկու գրչագիր Նիւ Եորքի «Հանրային Գրադարան»ում

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

1972 թ.-ի ամրան ամիսներին, երբ այցելութեան նպատակով գտնուում էի Նիւ Եորք քաղաքում, նոր ու տեսարժան վայրեր ու թանգարան-յուշակոթողներ տեսնելուն զուգընթաց, իմ մտածումն ու մի նպատակն էլ հայերէն ձեռագրեր, գիրքեր ու հնագիտական իրեր գտնելն ու տեսնելն էր։

Երբ Նիւ Եորքի գլխաւոր «Փբլիք Լայբրերիզ»ն (Հանրային գրադարանը) այցելեցի, նախ հետաքրքրուեցի այնտեղ գտնուող գրքերի հայկական բաժնով, ուր կային մի շարք հայերէն գրքեր, որոնց թւում նաեւ Լազարեան Ճեմարանի Աւետարանի լուսապատկերի մի օրինակը։

Երբ հայերէն ձեռագիր կամ հնատիպ՝ հազուագիւտ գիրք գտնելու յոյս կտրուեց, որոշեցի տեսնել գրադարանի օտարլեզուեան ամենահին գրչագիրը եւ նկարազարդ գրքերից մէկը։ Առ այդ, յատուկ արարողութեամբ, յաջողեցի ձեռագրատուն այցելելու իրաւունք ստանալ եւ անհրաժեշտ արտօնագիրը ձեռքիս, անցայ գրադարանի 319-րդ սենեակը, որտեղ պահւում էին ձեռագիր գրքերը։

Պատկերազարդ մի գրչագիր տեսնելուց յետոյ, հետաքրքրուեցի հայերէն ձեռագրով, որ ի զարմանս եւ մեծ ուրախութիւն ինձ, բերեցին երկու տուփ, որոնց մէջ խնամքով տեղաւորուած էին հայերէն երկու գրչագիր։

Մի երկու անգամ այցելելով, յաջողեցի ցուցակագրել գրանք, որոնց ներկայացնում ենք այստեղ։

Ձեռագրերից մէկը մի «ժողովածու» է, «Սահմանք Իմաստասիրականք Դաւթի Փիլիսոփայի» նիւթով, գրուած Նոր Ջուղայում, 1621 թ.ին, իսկ միւսը՝ «Մաշտոց», գրուած ԺԵ. դարում։

Բացի այս երկու ձեռագրերից, Նիւ Եորքի թանգարաններում, եկեղեցիներում եւ անհատների մօտ կան այլ ձեռագրեր եւս, որոնցից ոմանք իրենց թուով ու արժէքով մեծ կարեւորութիւն են ներկայացնում։

Անհատական ժողովածուների մէջ, ամենից արժէքաւորը Պրն. Յարութիւն Հազարեանի ձեռագրերի (ինչպէս եւ նկարների ու հնադիտական իրերի) հաւաքածոն է, որոնց թիւը հասնում է աւելի քան ութ տասնեակի։

Ձեռագրեր կան նաեւ «Մեթրոփոլիթըն» թանգարանում, որ հակառակ իմ մի քանի այցելութեան, չյաջողեցի տեսնել։ Ներկայիս այդ ձեռագրերից մէկի Ա. կողմի նկարն ունենք մեր ձեռքի տակ (նուէր՝ Օր. Ա. Աբրահամեանից), որի նկարագրութիւնը բերում ենք այստեղ (տես՝ էջ 171–ի նկարը)։

Ձեռագրի նիւթը Աւետարան է, գրուած ԺԳ–ԺԴ. դարում։ Ունի արծաթապատ կողմ, որի Ա. կողքը ներկայացնում է Յիսուսի ծնունդը եւ հովիւների այցելութիւնը կեդրոնում, իսկ վերեւում՝ խաչնարածներ եւ երեք մոգերը, աւելի վեր՝ հրեշտակներ ու առաքեալներ, որոնց միջոցում, մի երիզի վրայ գրուած է «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խա»։

Շուրջն եզերուած է խաղողի ողկոյզների ու տերեւների գեղեցիկ մի զարդերիզով, ընդելուզուած 68 հատ գունաւոր թանկարժէք ակերով։

Յիսուսի ծնունդի քանդակի մօտ երեւում են նաեւ Աստուածածինն ու Յովսէփը, որոնց ներքեւում գրուած է.

«ԱՒԵՏԱՐԱՆՍ ԱՅՍ ԱՐԵԱԼ ՀԱԼԱԼ ԸՆԶԻՍ ԻՒՐ ԱՂՕԹԵԼՈՒ ԵՒ ԳՕՀԱՆԱԼ ՓՐԿԶԻՆ ՄԷՐՈՅ Յ(ԻՍՈՒ)ՍԻ Ք(ՐԻՍՏՈ)ՍԻ»։

Նիւ Եորքում մի անհատի մօտ եւս գտանք մի գրչագիր, «Մեկնութիւն Արարածոց», որի նկարագրութիւնն եւս բերում ենք, երկու ձեռագրերից յետոյ։

ՍԱՀՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՔ ԴԱՒԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ

Նոր Ջուղա (ժողովածու) 1621 թ.

Թերթ՝ 134։
Պրակ՝ 10, իւրաքանչիւրը 14 թերթ։

«Մեթրոփոլիթը» թանգարանի հայերէն
ձեռագրերից մէկի Ա. կողքի նկարը:

Մեծութիւն՝ 12·3 x 9 x 2·5 սմ·։
Նիւթ՝ թուղթ։
Կազմ՝ կաշեպատ տախտակ։
Պահպանակ՝ չունի։
Վիճակ՝ բաւարար, թերթ 117–ից ձեռագիրը քիչ փոխուում է։
Պարապ թերթեր՝ 1, 2, 18, 19, 20, 21, 82, 133, 134։
Գիր՝ մանր եւ խոշոր նոտրգիր։ Մինչեւ թերթ 116բ· մանր, իսկ յետոյ խոշոր գրով է, երկու մասերը թղթով էլ տարբեր են եւ պրակներով էլ չեն կապուում իրար հետ։
Գրութիւն՝ միասիւն։
Տողեր՝ 21։
Գծումները՝ ճնշումով։
Թանաք՝ սեւ, որոշ տողեր ու մեծատառեր կարմիր, նոյնը եւ լուսանցքագծերը։
Զարդագրութիւններ՝ մի քանի հատ։
Պատկեր՝ չունի։
Խորան՝ –
Կիսախորան՝ –
Ճակատազարդ՝ 22ա, 52ա, 83ա։
Լուսանցազարդ՝ մի քանի հատ, գլուխների մօտ և այլ տեղերում։
Ծաղկոդ՝ –
Գրիչ՝ Ստեփանոս Երէց Ջուղայեցի (Ձիք Ստեփանոս)։
Ժամանակ՝ 1621 թ·։
Վայր՝ Նոր–Ջուղա,
Պատուիրատու՝ –
Ծանօթութիւն։– Այս ձեռագիրը տեսել եւ թերեւս ցուցակագրել են նաեւ Ց· Քիւրտեանը (1919 թ· Նոյ·ի 10), Գրիգոր Զէ–քըմեանը – Մարաթեցի – (1950 թ· Փետր·ի 8), Իսահակ Տ· Վ· Ղազարեանը (1963 թ·), Յովհաննէս Արեղան եւ Վ· Նալ–բանդեանը (Երեւան)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

թ· 3ա· Սահմանք իմաստասիրականք Դաւթի փիղիսոփայի···։
22ա· Արիստոտիղի առաքինութեան առ Աղէքսանդր թագաւոր։
52ա· Նախերգանք քարոզի·
Երանելին եւ սքայն (?) հզօրն եւ թագաւորն թագաւորաց եւ Տէրն Տէրանց··· Աստուածն Աստուծոց···։
83ա· Աւրհնութիւն ժողովրդեան եւ շրջակայ յերկրին ի գթութեանցն աստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ այս անուն բանի սպասաւորէ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ···։

117· Ցիշատակարան աւետարանի արարեալ յոգնամեղ Ստեփանոս իրիցէ Ջուղայեցոյ որդի Ստեփանոսի։
Ազգիս հայոց թվականին կրկին քառակ ւ(և) երկհարիւրին եւթանասուն երկու ամին գրեցաւ դանձս ածային, Աւետարան Խորհրդով լին...։

121բ· Ցիշատակարան Աստուածաշունչ գրոց արարեալ... յոգնամեղ Ստեփանոս իրիցէ Ջուղայեցոյ որդի Ստեփանոսի ի խնդրոյ պարոն Մէլիք աղային որդոյ խաւջայ Սաֆարին
Ի թուականիս մերոյ հայկազեան,
Որ էր անցեալ քսան յոբելեան
Այն եւ եւթ տասն աւելի լման
Գրեցաւ շունչս աստուածական,
Ըստ առաքելոց սրբոց կոչման...։

129բ· Նորին Ստեփանոս երիցու արարեալ յիշատակարան շարակնոցի·

Որք ընծորանս հոգոյն արբին,
Չշարականսն ոգեալ գրեցին։
Նախ մեծ Մեսրոպըն սքանչելին,
Ըզկարգ բոլոր աղուհացին.
Չչարչարանացն աւագ շաբթին
Իսկ ես նուաստ անձն անարժան
Զիք Ստեփանոս մեղաց ման,
Զարեաւք լրցեալ բարեաց ունայն,
Եւ սրիկայս քան զամենայն,
Այսքան գրոց աստուածական,
Զոր շարեցի անբանական,
Զձեզ աղաչեմ որք հանդիպիք,
Զմեղադրել իմ լրբութեան,
Զի ես տկար սղխալական,
Զեռնարկեցի յօժարական,
Գրեցի զկրկին սուրբ կտակարան,
Ոտամբ չափեալ (ը)ստ հոմերական,
Թ· 132բ· Արդ ես նուաստ անձն եղկելի,
Զիք Ստէփանոս մեղաց գերի
Որդի գոլով Ստեփանոսի,
Եւ գաւառաւ Ջուղայեցի,
Թ· 130ա·(*) Անուն ունիմ քահանայի,
Բայց գործեմ յոյժ աղտեղի,

(*) Վերջին թերթերը սխալ են դասաւորուած։

Զձեզ աղաչեմ տեսողք բարի,
Զմեղադրել ինձ անմտի,
Երիս երբեակ եւ եզակի,
Այսքան հարիւր թվինն հայի,
Նոյնքան եօթնից ե աւելի,
Սակաւ բանիկս այս յարմարի
Ի մուտն ամսին Ապրիէլի,
Որ Ղաղարու շաբաթ կոչի,
Եւ շամշ ամսին կրկին վեցի,
Եղեւ զբրաւ դոյն այս բանի։
Ով դու եղբայր իմ ցանկալի,
Պօղոս պըվէտ քաջ եւ արի,
Ընկալ սիրով անդ ժրելի
Ի դանձ ըղձոյտ ըստ լոմայի...

ՇԱՐԱԿԱՆ
(ԺԵ· դար)

Թերթ՝ 363։
Պրակ՝ 29 *իւրաքանչիւրը* 12 *թերթ*։
Մեծութիւն՝ 14·2 x 9·5 x 7 *սմ*։
Նիւթ՝ *մաղաղաթ*։
Կազմ՝ *չունի, վերջում մի փոքր կաշուի կտոր, դաճաւոր*։
Պահպանակ՝ *սկզբում երկու, իսկ վերջում մէկ թերթ երկաթագիր մաղաղաթաթ, Աւետարանից*։
Վիճակ՝ *վատ պահուած, առաջին մասի թերթերից ոմանց անկիւնները մկնակեր*, 131–*րդ թերթը կէսից կտրուած*։
Պարապ թերթեր՝ *թ*· 353, 363՝ *վերջին թերթը, յետոյ է աւելացուել*։
Գիր՝ *բոլորագիր*։
Գրութիւն՝ *միասիւնակ*։
Տողեր՝ 23։
Գծումները՝ *ճնշումով*։
Թանաք՝ *սեւ*։
Զարդագրութիւններ՝ *բաւական թուով եւ զանազան ձեւերով*։
Պատկեր՝ –
Խորան՝ –
Կիսախորան՝ 125*ա*։
Ճակատազարդ՝ 11*ա*, 51*ա*, 99*ա*, 112*բ*, 174*ա*, 219*բ*, 277*ա*, 298*բ*, 320*ա*։

Լուսանցազարդ՝ *լուսանցքներում ունի մանրանկարներ եւ այլ զարդեր։ Մանրանկար՝ 33ա, 38բ, 40բ, 196բ։*
Ծաղկող՝ *անյայտ։*
Գրիչ՝ *Առաքեալ։*
Ժամանակ՝ *ԺԵ. դար։*
Վայր՝ *անյայտ։*
Պատուիրատու՝ –
Ծանօթութիւն.– *Ձեռագիրը նուէր է տրուած Տիկ. Սիրվարդ Փափազեանի կողմից, 1964 թ.ին։*
Պակասում է գրչի գլխաւոր յիշատակարանը։

Գրչի յիշատակարան

Թ. 38ա. Զբազմամեղս զԱռաք(եալ) (?) աղաչեմ յիշել։

Երկրորդական յիշատակարան

Թ. 360բ. Կազմեցաւ ականց շարակնոց ի թվին ՌՃԼԱ (1682) յերկիրս Զմմըշկածու կարմիր վանք ընդհովանեաւ սբ. Կարապետին եւ սբ. Նշանին ձեռամբս անարժան Արսէն գրչիս ի խնդրոյ յոգնամեղ եւ հեզահոգի տէր Բարսեղն որ ետ փափագանաւք կապել եւ վերըստին նորոգել վասն անձին իւրոյ եւ (յ)իշատակ ի վայելումն իւր հարազատ եղբօր որդուն Տէր Յովհաննէս կրաւնաւորին եւ եղբարցն Կուլասարին եւ Տաւնապետին եւ քրւերն Ինամին եւ մօրն Մուրվարթին եւ հարսին Սամարին եւ փոքրիկ որդւոյն Ոսկեակն։ Եթէ ոք անդգնի եւ կամ աւժտէն կամ գրաւական դնեն զմասն Յուղայի առցեն եւ զպատիժն Կայենին կրեսցեն եւ ը(նդ) խաչհանողաց դասուն դասեսցէ եւ բարով այելել տացէ որ չափ ի մարմնի կայք եւ յետ աստացելոյն անել ընդ առաջին կրաւնաւոր(ա)ցն դասեսցէ զհոգիս ձեր եւ զննջեցելոց հոգին ձեր եւ զմերոսն ամէն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ
(ԺԷ. դար)

Թերթ՝ 174, *որից 6–ը թ. 122–127–ը տպագիր։*
Պրակ՝ 14, *իւրաքանչիւրը 12 թերթ, պրակներից շատերը քայքայուած, տեղահանուած եւ անկանոն։*
Մեծութիւն՝ 9·6 x 13 x 3 *սմ.։*
Նիւթ՝ *դեղնաւուն հաստ թուղթ։*

Կազմ՝ կաշեպատ տախտակ, վրան ճնշումով զարդեր, հնամաշ, վերջին կազմի կաշին ծակծկուած։ Ներսից դեղին վարդերով եւ կարմիր ֆոնով կեղտոտուած մետաքս կտոր։

Վիճակ՝ քայքայուած, կազմից պոկուած. սկզբից եւ միջից թերի։

Պարապ թերթեր՝ չունի։

Գիր՝ բոլորգիր։

Գրութիւն՝ միասին։

Տողեր՝ 16։

Գծումները՝ ճնշումով։

Թանաք՝ սեւ, միայն մի քանի տող եւ մեծատառեր՝ կարմիր։

Զարդագրութիւններ՝ չունի։

Պատկեր՝ –

Խորան՝ –

Կիսախորան՝ –

Ճակատազարդ՝ –

Լուսանցազարդ՝ –

Ծաղկող՝ –

Գրիչ՝ Ղազար։

Ժամանակ՝ ԺԷ. դար։

Վայր՝ անյայտ։

Պատուիրատու՝ –

Ծանօթութիւն.– Ձեռագրի հին էջակալութիւնն ունի 179 թիւը, բայց այժմ խառնուած թերթերը կրկին դասաւորելով ու էջակալելով եւ պատռուածները նորոգելով եղաւ 174 թերթ, տպագիր 6 թերթի հետ միասին։ Տպագիր թերթերը պատկանում են մի տաղարանի, որի մէջ կան «Տաղ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» (էջ 151), «Տաղ Ոսկեանց» (էջ 153), «Տաղ Հռիփսիմեանց» (էջ 157)։ Պատկանում է Տիկ. Ռոզի Կարապետեանին, Նիւ Եորք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թ. ա. Որպէս Ադամն այն առաջին,
Այն որ մեղօքն անուանի հին,
Որով մեռաք ամենեքին,
(Ե)ւ կորուսաք ըզ ցանգալին,

(Սոյն տունը ընդօրինակեցինք ա թերթի կէսից, որովհետեւ էջի սկզբի տողերը մաշուած ու ջնջուած են)։

116ա. Ցիշատակ բանի գրողի մաղթանաց Տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի որի թոռանց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։

Ի վեց հարիւր հայոց թվական,
Եւ յառաջին սկըսեալ նոր ամ,
Բանս գրեցաւ աղօթական,
Երկ հազարեան

170ա. Ցիշատակարան սրբոյն Ներսէսի հայոց կաթողիկոսի։

Վասն Աստուծոյ խաւսեալ զայս բան,
Ինձ ոչ երանկ եւ ոչ նըման,
Զի սիրտ յիմար անձն անարժան,
Ոչ է տեղի իմաստութեան։

– Սոյն մասը վերջանում է հետեւեալ տասներեք երկտողով, որի երկտողի սկզբնատառերը գրուած են կարմիր երկաթագիր մեծատառերով եւ կարդացւում են «ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԵՐԳ».

Սուրբ երջանիկ տեառնըդ Ներսէս,
Զքեզ տէր ընտրեաց ի յաշխարհէս։
Տընօրինել հայոց հանդէս,
Զեկեղեցի շնորհօք պէս պէս։
Երկնաւորաց նմանապէս,
Ինքն դասուց խորհրդապէս։
Փառս առաքել երկնահանդէս,
Տեառն Աստուծոյ ի յիւր հաւատէս։
Աւրհնել զփրրկիչն անհատապէս,
Ընդ հօր եւ հոգւոյն յոյժ միապէս։
Նըմին վեհի մաղթեայ պէսպէս,
Զքեզ աղաչեմ տէր սուրբ Ներսէս։
Նրւաստ ոգիս ես Ստեփաննոս
Մաղթեայ վասն իմ միշտ առ Քրիստոս։
Որով սրբրի բորբք մարմնոյս,
Զընջի յանցանք խաւար հոգւոյս։
Սովաւ զարթնուլ ի խոր քընոյս,
Վերաբերիլ ընդ քեզ ի լոյս։
Ի յաղջամուխջ տրղմէ գրբոյս,
Ինձ ձեռընտու լինել եւ յոյս։
Երդել ընդ քեզ զերգս հաճոյս,
Երրորդութեանդ ստեղծող ըզդոյս։
Բարունաբար ծոյլ եւ հիքոյս,
Լեր նաւակից ընկըղմելոյս։
Գոհաբանող լինել գերոյս,
Տեառն արարչին որ է մեզ յոյս։

Գրչի յիշատակարան

Թ. 170ա. *Որք հանդիպիք այս սուրբ գրոց,*
Որ է սկըսեալ յարարածոց,
Աւարտ առեալ յառաքելոց,
Մինչ ի գալուստ վերին վերնոց,
Զիս զՂազար հոգովըս խոց,
Ցիշման արժան առնէք ձերոց։

Թ. 17բ. *Փառք հօրն էականի որդոյն միածնի եւ փառակից սուրբ հոգոյն Ամէն, ի թՒ (մնացեալը չի գրուել, էջը մնում է սպիտակ)։*

Սրկրոբդական յիշատակարան

Թ. 174բ. *Աստուր Մալեան։*

TWO ARMENIAN MANUSCRIPTS IN THE NEW YORK PUBLIC LIBRARY

L. K. MINASSIAN

(Summary)

There are two Armenian manuscripts in the Public Library of New York. The first is an anthology, bearing the title «Sahmank Imasdassiragank Davdi Pilisopayi» (Philosophical Frontiers of David the Philosopher), 134 sheets, written on paper, in New Zulpha, in the year 1621, by Father Stephen of Zulpha. The second is a «Mashtotz» (Ritual), 363 sheets, written on parchment, in the 15th century, by the scribe Arakyal, the place unknown. There is another manuscript in the possession of a New Yorker, Mrs. Rosy Garabedian. It is entitled, «Megnoutune Araradzotz» (Commentary on Beings); 174 sheets, written on paper, in the 17th century, by the scribe Lazar, place unknown.